

ՀՐԱՎԵՐ
ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ
«Ֆոկուս-խմբային քննարկումներ և կլոր սեղաններ» IRFSP/TA/CQS-2021/002

Հայաստանի Հանրապետություն

"Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն" Ծրագիր

Խորհրդատվական Ծառայություններ՝ *Հնտություն խորհրդատուի որակավորման հիման վրա /ՀԽՈ/*
ԳԶՄՀ Փոխառություն No 2000000779

Հայաստանի Հանրապետությունը /այսուհետ՝ Փոխառու/ փոխառություն է ստացել Գյուղատնտեսության Զարգացման Միջազգային Հիմնադրամից /այսուհետ՝ ԳԶՄՀ/ "Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն" Ծրագիրը /այսուհետ՝ ԵԳՖԱՄ / իրականացնելու համար և նպատակ ունի գումարների մի մասն օգտագործել սույն խորհրդատվական ծառայությունները «Ֆոկուս-խմբային քննարկումներ և կլոր սեղաններ» IRFSP/TA/CQS-2021/002 ձևով բերելու համար:

Սույն առաջադրանքի հատուկ նպատակն է աջակցել թիրախային բնակչությանը հետևյալ ուղիներով.

- փոքրածավալ տնտեսությունների արտադրության, հետարտադրական գործընթացների արդյունավետության բարձրացում և անցում բարձրարժեք մշակաբույսերի աճեցմանը,
- գյուղմթերքներ վերամշակող կազմակերպությունների և գյուղացիական փոքր ու աղքատ տնտեսությունների միջև կապի հաստատում՝ նրանց համար հասանելի դարձնելով տեղական ու միջազգային շուկաները և ստեղծելով զբաղվածության հնարավորություններ աշտեղղայի շրջանակում,
- տեղումների մակարդակի տատանումների նկատմամբ գյուղատնտեսական արտադրական համակարգերի ճկունության բարելավում,
- սննդի անվտանգության բարելավում՝ ապահովելով գյուղատնտեսական արտադրանքի և ընտանեկան առողջապահության որակի բարձրացում՝ տնային տնտեսությունների ջրամատակարարման բարելավման միջոցով:

Ծրագրի թիրախային տարածքներն են ՀՀ 7 մարզեր՝ Շիրակի, Լոռու, Տավուշի, Գեղարքունիքի, Վայոց Ձորի, Սյունիքի և Արագածոտնի:

Աշխատանքներ

Ծառայություն մատուցողը (ՄՍ) պետք է անցկացնի ՖԽՔ-եր և կլոր սեղան քննարկումներ 7 մարզերում և 29 համայնքներում, որտեղ իրականացվել է ԳՏՁԵ բաղադրիչը՝ ջրաչափեր չօգտագործելու հետ կապված հիմնական խնդիրները հայտորոշելու նպատակով: Մասնավորապես, ՄՍ-ն պետք է.

- Կազմակերպի և անցկացնի ֆոկուս-խմբային քննարկումներ 7 մարզերում՝ պարզելու ջրաչափեր չօգտագործելու հետ կապված հիմնական խնդիրները: Յուրաքանչյուր մարզում անցկացվելիք ՖԽՔ-երի թիվը ներկայացված է վերը բերված աղյուսակում: ՖԽՔ-երի իրականացման վայրը և ամսաթիվը պետք է քննարկվեն ՄՍ-ի հետ և հաստատվեն ԳՏՁ ԾԻԳ-ի կողմից:
- Կազմակերպի և անցկացնի ընդհանուր առմամբ 3 կլոր սեղան քննարկումներ ջրաչափ օգտագործող և չօգտագործող համայնքների ներկայացուցիչների միջև:

ՄՍ-ն մասնավորապես պետք է իրականացնի հետևյալ աշխատանքները.

- Թիրախային մարզերում և համայնքներում ծրագրի, համակարգի և օժանդակի ՖԽՔ-երի և կլոր սեղան քննարկումների անցկացմանը,
- Մշակի հստակ օրակարգ, մեթոդաբանություն և ժամանակացույց ՖԽՔ-երի և կլոր սեղանների համար,
- Քարտեզագրի ջրօգտագործողների գործող ընկերությունները,
- Կազմի կարճ սահիկաշար ԳՏՁԵ բաղադրիչի և կատարված աշխատանքի վերաբերյալ,
- Կազմի կարճ սահիկաշար ջրային ռեսուրսների կառավարման վերաբերյալ,
- Կազմի հարցաթերթ և համաձայնեցնի ԳՏՁ ԾԻԳ-ի հետ,
- Ծրագրի և անցկացնի ՖԽՔ-եր և կլոր սեղաններ,
- Վերահսկի և հետևի ՄՍ-ի կողմից ներգրավված անձի (անձանց) աշխատանքին՝ ՖԽՔ-երի միջոցով որակյալ տեղեկատվություն ապահովելու նպատակով,
- Վերլուծի և ներկայացնի ՖԽՔ-երի և կլոր սեղանների ընթացքում ստացված տվյալները:

"Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ" ՊՀ /ԳՏՁ ԾԻԳ/ հրավիրում է բոլոր շահագրգիռ Խորհրդատվական Կազմակերպություններին ներկայացնել

Հետաքրքրության հայտեր «Ֆուկուս-խմբային քննարկումներ և կյոթ սեղաններ» IRFSP/TA/CQS-2021/002 Խորհրդատուի ընտրության նպատակով մրցույթին մասնակցելու համար:

Շահագրգիռ Խորհրդատվական Կազմակերպությունները պետք է տրամադրեն տեղեկատվություն ցույց տալով, որ նրանք ունեն անհրաժեշտ որակավորում և համապատասխան փորձառություն ծառայություններն իրականացնելու համար: Խորհրդատվական Կազմակերպությունները կարող են ներկայացնեն միայն մեկ Հետաքրքրության հայտ՝ առանձին կամ Համատեղ ձեռնարկության կազմում:

Ծրագրի Առաջադրանքի պայմանները և Հետաքրքրության հայտի ներկայացման ձևանմուշը հրապարակված են <https://raed.am/procurement/adstatements.html> կայքում և պետք է ներառեն հետևյալ փաստաթղթերը՝

- Դիմում-նամակ՝ ուղղված ԾԻԳ-ի տնօրենին;
- Պետական գրանցման վկայականի պատճենը;
- Հայտը ստորագրողի լիազորագիրը;
- Տեղեկատվություն Խորհրդատվական կազմակերպության ընդհանուր փորձի վերաբերյալ /տարիների քանակը/ ծրագրի շրջանակներում;
- Վերջին հինգ տարիների ընթացում կնքված նմանատիպ պայմանագրերի վերաբերյալ տեղեկատվություն;
- Հետաքրքրության Հայտը համատեղ ներկայացնելու դեպքում ՀԶԳ-ի պայմանագիրը;

Գնահատման չափանիշները հետևյալն են.

Չափանիշը

Բալերը

- Առնվազն 5 տարվա մասնագիտական փորձ ակադեմիական, զարգացման և կիրառական հետազոտությունների ու վերլուծության բնագավառում 50
 - Վերոնշյալ ոլորտներում ՖԻՔ-երի անցկացման առնվազն 3 տարվա փորձ,
 - Հստակ պատկերացում հետազոտության վերաբերյալ և ՖԻՔ-երի մասնակիցների հետ հաղորդակցվելու կարողության,
 - Անգլերեն և հայերեն հաշվետվություններ կազմելու ունակություն,
 - Հստակ պատկերացում հետազոտության առարկայի, խնդրի և թեմայի վերաբերյալ
- Սոցիոլոգիական հարցումների անցկացման փորձ 50

Անցողիկ նվազագույն շեմը՝ 75 միավորն է:

Հետաքրքրված խորհրդատուների ուշադրությունը հրավիրվում է «ԳԶՄՀ-ի վերանայված քաղաքականությունը իր գործունեության և գործողությունների մեջ խարդախության և կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ»:
Հետաքրքրության հայտը ներկայացվում է հայերեն, 1 բնօրինակ և 1 պատճեն կամ էլեկտրոնային տարբերակով:
Պատճենների միջև տարբերության դեպքում հիմք կընդունվի Հայտի բնօրինակը:

Ծառայությունների իրականացման ենթադրվող ժամկետը՝ 2 ամիս:

Խորհրդատուն ընտրվելու է "Ընտրություն Խորհրդատուի Որակավորման հիման վրա" մրցույթային եղանակով, 2010թ. Սեպտեմբերին ԳԶՄՀ-ի կողմից հրապարակված Գնումների ուղեցույցով և Գնումների Ձեռնարկով կամ վերը նշված փաստաթղթի ցանկացած թարմացված հրապարակված տարբերակով:
Լրացուցիչ տեղեկությունների կամ պարզաբանումների համար խնդրում ենք գրել procurement@raed.am էլեկտրոնային հասցեին:

Պարզաբանումները պետք է ստացվեն վերջնաժամկետից առավելագույնը 7 օր առաջ, իսկ պատասխանները կհրապարակվեն առցանց՝ www.raed.am կայքում: Հետաքրքրության հայտերը պետք է ներկայացվեն նշված հասցեով մինչև 2022 թ. հուլիսի 08-ը՝ ժամը 17:00-ն:

**“Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի
իրականացման գրասենյակ” ՊՀ
Գնումների բաժնի պետ՝ Արթուր Գրիգորյան
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Տիգրան Մեծի 4, 6 հարկ:
Հեռախոս՝ 374 10 – 54 – 65 -10; Ֆաքս՝ 374 10 – 58 – 80 -58; e-mail: procurement@raed.am**